

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից ՀՀ կառավարության 2015 թվականի գերակա խնդիրների և գործունեության միջոցառումների ծրագրի իրականացման արդյունքների մասին (սեղմագիր՝ ՁԼՄ-ների համար)

**1. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 4-ի
№ 587-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության
որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը**

Մշակվել և սահմանված կարգով ՀՀ կառավարություն է ներկայացվել ՀՀ կառավարու-
թյան որոշման նախագիծը, որը ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել (ՀՀ
կառավարության 2015 թվականի մարտի 10-ի № 238-Ն որոշում):

**2. «Հայաստանի Հանրապետության մանկապատանեկան մարզադպրոցները,
մարզաձևերի ազգային ֆեդերացիաները և այլ մարզական հասարակական
կազմակերպություններ գույքով ապահովելու մասին» ՀՀ կառավարության որոշման
նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը**

Մշակվել և սահմանված կարգով ՀՀ կառավարություն է ներկայացվել ՀՀ
կառավարության որոշման նախագիծը, որը ՀՀ կառավարության հավանությանն է
արժանացել (ՀՀ կառավարության 2015 թվականի մայիսի 27-ի № 559-Ա որոշում):

**3. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի
սեպտեմբերի**

**1-ի № 1428-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ
կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը**

Մշակվել և սահմանված կարգով ՀՀ կառավարություն է ներկայացվել ՀՀ
կառավարության որոշման նախագիծը, որը ՀՀ կառավարության հավանությանն է
արժանացել (ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 1-ի № 1114-Ն որոշում):

**4. «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող
մանկապատանեկան մարզադպրոցներում աշխատող մարզիչ-մանկավարժների և
ղեկավար անձնակազմի պաշտոնային դրույքաչափերի ու հավելավճարների վճարման
կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ
կառավարություն ներկայացնելը**

Մշակվել և սահմանված կարգով ՀՀ կառավարություն է ներկայացվել ՀՀ
կառավարության որոշման նախագիծը, որը ՀՀ կառավարության հավանությանն է
արժանացել (ՀՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 15-ի № 798-Ն որոշում):

**5. «Երիտասարդական աշխատողի ինստիտուտի կանոնակարգը հաստատելու
մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը**

Մշակվել և սահմանված կարգով ՀՀ կառավարություն է ներկայացվել
«Երիտասարդական աշխատողի ինստիտուտի կանոնակարգը հաստատելու մասին»
Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, որը հետագայում
լրամշակվել է որպես ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծ:

Արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել (ՀՀ կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի № 56 արձանագրային որոշում):

6. Երիտասարդական քաղաքականության մասնակցային գործընթացի խթանում և զարգացում

1. Երիտասարդական աշխատողի վերապատրաստման ծրագրի մշակման նպատակով 2015 թվականի հունվար-մարտ ամիսներին ուսումնասիրվել են ԱՊՀ անդամ և եվրոպական երկրներում երիտասարդական աշխատողի ինստիտուտի արդյունավետ կիրարկման մեխանիզմները, ինչպես նաև երիտասարդական աշխատողի պատրաստման և վերապատրաստման ծրագրերը:

2015 թվականի հունիս-օգոստոս ամիսներին իրականացվել է «Երիտասարդական աշխատողի և աշխատանքի մասին հետազոտություն» ծրագիրը:

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության պետական երիտասարդական քաղաքականության շրջանակներում գործող առցանց դրամաշնորհային համակարգի միջոցով «Թրեյներների ազգային թիմ» հասարակական կազմակերպության կողմից 2015 թվականին իրականացվել է «Երիտասարդական աշխատանքի կայացումը Հայաստանում. մարտահրավերներ և հնարավորություններ» ծրագիրը:

Մշակվել և ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 2015 թվականի դեկտեմբերի 29-ի № 301-Ա/1 հրամանով հաստատվել է երիտասարդական աշխատողի վերապատրաստման ծրագիրը:

2. Պատրաստվել և www.erit.am կայքում հրապարակվել է երիտասարդական աշխատողի պատրաստման և վերապատրաստման ուսումնական ուղեցույցը:

3. Երիտասարդության հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, պետական մարմինների վերապատրաստման նպատակով իրականացվել են՝

- «Ուսուցման կազմակերպում՝ ուղղված երիտասարդական հասարակական կազմակերպությունների կարողությունների և հմտությունների զարգացմանը» ծրագիրը:

- «Առցանց համակարգով ներկայացված դրամաշնորհային ծրագրերի փորձագիտական քննությունն իրականացնող փորձագետների վերապատրաստում» ծրագիրը:

- «Մեթոդական աջակցություն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հասարակական կազմակերպություններին և երիտասարդներին» ծրագիրը:

7. Նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների շրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի կարևորում

2015 թվականի 1-ին կիսամյակում մշակվել և կազմվել են «Սպորտլանդիա-2015» զանգվածային մարզական միջոցառման ծրագրերը, որոնցում ընդգրկված են վեց խաղային մրցաձևեր: Միջոցառումն իրականացվել է ՀՀ մարզերի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախադպրոցական տարիքի երեխաների և դպրոցական 5-6-րդ դասարանների աշակերտների շրջանում՝ 3 փուլով: Միջոցառմանը ընդհանուր առմամբ մասնակցել են 4536 նախադպրոցական տարիքի երեխաներ և աշակերտներ:

Մրցանակային տեղեր զբաղեցրած նախադպրոցական հիմնարկները պարգևատրվել են գավաթներով, վկայագրերով և դրամական մրցանակներով: